



ԵՐԳ

ՏԵԱՌԻՆ ՆԵՐՍԻՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ
ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ԱՆՁԻՆ ԶՂՋԱՑԵԼՈՑ
ԵՒ

ԲՈՂՈՔ ԻՒՐԱՔԱՆՉԻՐՈՑ ԴԻՄԻ
ԽՈՍՏՈՎԱՆԱԲԱՐ

(ՅԱԽԱՐՑ ԻՒՐԱՔԱՆՉԻՐ ՏԱՆ ԴՊԻՐՔՆ ԵՂԱՆԱԿԵՆ ԵՐԻՑՄ՝
ՏԷՐ ՈՂՈՐՄԵԱ. ՏԷՐ ՈՂՈՐՄԵԱ. ՏԷՐ ՈՂՈՐՄԵԱ.)

Աշխարհ ամենայն, առ իս նայեցեալ,
ախտակից լերո՛ւք:
Բանամ զշրթունս, բարբառիմ զլեզուսս,
բողոքեմ զանձնէս:

Գող եղէ մեղաց, գտող կորստեան,
գուք ինձ փորեցի:
Դաւեցի զանձն իմ, դաւանանեցի,
դարան գործեցի:

Երբեմն էի յոյս, և այժմ եմ խաւար
և ստուեր մահու:
Զիս՝րո՞ պատմեցից զթի մեղաց իմոց,
զի բազում եմ յոյժ:

Էրկինք և երկիր, եկա՛յք, ողբացէ՛ք,
եղկելի զանձն իմ:
Ընտրեցի զչարն, ընկալայ կամաւ
զհոյսս մեղաց:

Թաթախմ տղմով, թաթախմ ի մեղս,
թոթափիլ չկարեն:
Ժանտ ախտի լցեալ, ժահահոտ եղէ
ժամանակս բազումս:

Ի բաց մեկնեցայ ի սուրբ խորհրդոց,
ի բարեաց գործոց:
Լա վարկաւ անձն իմ լուսոյն հեռանալ,
լինել ընդ խաւար:

Խորհուրդք չարին խաբեն զհոգիս
խորատոյզ առնեն,
Ծածկեն անդնոք, ծիծաղին զլորմամբս,
ծանակ զիս առնեն:

Կամաւ կորացայ, կարկամեալ անձամբ,
կանգնիլ ո՛չ կարեն:
Հուր մեղաց կիզող հրդեհեաց որ յիս՝
հոգևոր բարիս:

Չաղկեցայ մեղօք, ձաղեցին տեսողքն.
 ձանձրացաւ հոգիս:
 Ղեղի դառնութեան ղօղեալ ի սիրտ իմ,
 ղամբար իմ շիշաւ:
 Ծաշակմամբ մեղաց ճաշեցի զմահ,
 ճոխաւ աղքատացայ:
 Մեռեալ եմ հոգովս, մոլորեալ մտօքս,
 միայն կամ մարմնովս:
 Յորոգայթ մահու յորտողին անկայ.
 յաղթեցայ յաղտից:
 Նետից թշնամունցն նշառակ եղէ,
 նոր միշտ խցոտիմ:
 Ծորջ պատեալ զինն շունք բազումք եղեն,
 շաղախին արեամբս:
 Որս եղէ չարին, ոռկանաւ մեղաց
 որսացաւ անձն իմ:
 Չարաչար վշտօք չարչարի անձն իմ.
 շունիմ դադարումն:
 Պարտապան գտայ պարտոց յանցանաց
 պարտեալս ի մեղաց:
 Չանամ զղջանալ, ջերանիմ դարձեալ,
 ջեռնում հրով մեղաց:

Ռաբբի կոչեցայ, ոսկայ անուանիմ
 ոսակական վարուքս:
 Սիրով ցանկութեան, սաստիկ բարկու-
 թեամբ սիրտ իմ խոցեալ է:
 Վիրօք յանցանաց վշտանայ հոգիս.
 վարանեալ շրջիմ:
 Տիրեցին ինձ չարք, տարագիր հանին
 տիրական գրկացն:
 Րաբունուն բարոյ թախճական ձայնին
 թոտինս ո՛չ լուայ:
 Ցանկութիւն չարեաց ցանկալի դիմօք
 ցաւեցոյց զաչս իմ:
 Իիրաքանչիւրոց իւսմամբ խոռն ախտից
 փծեալ է հոգիս.
 Փոյթացի՛ր, անձն իմ, փախչիլ ի չարեաց,
 փափագիլ բարեաց:
 Բեզ միշտ մերձ ծանիր քուն մահու եղեալ,
 քննող դատաւոր:
 Սուրբ Աստուածածնին բարեխօսութեամբ
 Յիշեա՛, Տէ՛ր, և ողորմեա՛:

Ա.Ծ.Խ.Ա.Ր.Ը Ա.Մ.ԵՆ.Ա.Յ.Ն

Ա. Թո՛ղ աշխարհ ամեն նայելով ինձի՝
 կարեկցի ինձմեն.
 Բ. Ծորթերս կշարժեմ որ լեզվովս բողոք
 բառնամ անձիս դեմ.
 Գ. Մեղքի գող մ՛եմ, ո՛վ, կորուստս գտա
 գուք մը փորելով.
 Դ. Դալ դրի ինձի, ու խարդավանքով
 թակարդ լարեցի.
 Ե. Լույս էի երբեմն, ու հիմա մահվան
 ատվերին մեջ եմ.
 Զ. Ի՞նչպէս պատմեմ ես մեղքերս բազմա-
 թիվ,
 մեղքերս պեսպես.
 Է. Երկինք և երկիր, եկե՛ք ողբացեք,
 անձս ախտակիր.
 Ը. Չարն սեպեցի լավ, ու մեղքերն ամեն
 հանձն առի կամալ.
 Թ. Անոնց մեջ թալալ՝ տիղմով թաթախված՝
 հնար չէ ինձ դուրս գալ.
 Ժ. Երկար միջոցի ախտով ես լցված՝
 ժանտ ֆոտ բուրեցի,

Ի. Մեկդի ես ըրի անբիծ խորհուրդներն
 ու գործերն բարի.
 Լ. Ուզելով անշեջ լույսեն հեռանալ՝
 մնացի մուրթին մեջ.
 Խ. Երբ հոգիս խաբված չար խորհուրդներե՛
 կսուզվի անդարձ
 Ծ. Անդունդներն ի վար, վրաս կխնդան
 ծաղրելու համար.
 Կ. Կամալ կորացած՝ չե՛մ կրնար կանգնիլ,
 կարկամ ու հոգած.
 Զ. Մեղքի կրակն էր որ այրեց իմ բոլոր
 բարիքս հոգևոր.
 Ը. Մեղքը ձաղկեց զիս. տեսնողն այպանեց,
 ձանձրացալ հոգիս.
 Դ. Լեղին դառնաջուր սիրտս ողողելով՝
 ճրագիս մարեց հուր:
 Ծ. Մեղքն ու մահն անջատ ճաշակելով
 ճոխս՝
 Մ. Հոգիս անկեղան ու միտքս է մոլոր,
 Մարմնով կամ միայն.

- Յ. Ցանցը մեղսամած ինկա որսողին,
ախտերով ընկնված.
- Ն. Նշավակ դրված թշնամվունն անտին՝
կատնեմ նոր հարված.
- Շ. Շուներուն ոհմակ միշտ կշաղախվի
արյունովս անհագ.
- Ո. Չարին որս եղա, մեղքի ոտկանով
անձս որսաց նա.
- Չ. Վիշտեր չարաչար զիս կտագնապեն
ու չունիմ դադար.
- Պ. Մեծ հանցավորի պատժովն ես ինկած
մեղքերու գերի.
- Ջ. Կշանամ զղջալ, բայց կիրքի կրակով
կախտանամ դարձյալ.
- Ռ. Ռաբբի կոչվեցա, այլ վարքս է ոամիկ,
անունս է ոակա.
- Ս. Բարկության բոցեն վառված ցանկո-
թյունք սիրտս կխոցեն.

- Վ. Հանցանքի վերքեր ցավ կուտան հոգ-
վույս, ծուռ կուգամ վար վեր.
- Տ. Չարերն կզրկեն վրաս տիրելով՝
զիս Տիրոջ զարկեն.
- Ր. Րաբունվունն բարի զվարթարար ձայնին
ականջ ես չդրի.
- Ց. Ցանկություններ սին ցանկալի տեսքով
աչքերս ցավցուցին.
- Ի. Ու բազմապիսի ախտերու հյուսքով
հոգիս կհյուծի.
- Փ. Անձն իմ, փութա՛ ալ չարիքեն փախչի,
բարիին ցանկալ.
- Ք. Մահվան քունդ երբ գա՛ քեզի մոտ գիտ-
ցիր դատավորն անմահ:

ԵՂԻՇԵ ԵՊՍ. ԴՈՒՐՅԱՆ

Իզմիր

(«Լոյս» շաբաթաթերթ, 1905 թ., էջ 206):

